

**ԲԱԼԵՆՈՒ ՍՈՐՏԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԳԱԿՈՒՄ**

Բալենու սորտերի ուսումնասիրությունը սկսել ենք 1937 թվականից: Այժմ սկզբնական ուսումնասիրության մեջ ընդգրկված են 20 սորտ, որոնք խմբավորված են հետևյալ կարգով:

1-ին խումբ.— Տեղական սորտեր՝ Երևանի տեղական, խոշորապտուղ Ամորել Փանիկից, խոշորապտուղ Ամորել Երևանից:

2-րդ խումբ.— Միջին ուսական սորտեր՝ Լյուբսկայա, կլոն Շպանկա, Վլադիմիրսկայա, Շուբինկա № 124, Վլադիմիրսկայա սորտի № 84 կլոն, Ամորել Կոզլովսկայա, Կրասնոպարսկայա:

3-րդ խումբ.— Միջուրինյան սորտեր՝ Պրոգորոդնայա-Միջուրինա, Պոլովկա, Կրասա սևերա, Յուբիլեյնայա, Անդո, Զախարովսկայա, Նադեժդա Կրուպսկայա, Մոնոմախ, Ռոգոնդա, Լյուբկա Միջուրինա:

4-րդ խումբ.— Օտարերկրյա սորտեր. Անգլիական, Պոդբելսկայա, Մոնոպորանսի:

Բալենու սորտերի բիոլոգիական առանձնահատկությունները

Լենինականի կոնտինենտալ կլիմայի պայմաններում, ձմռան խիստ սառնամանիքներին հաճախ ֆլյասվում են բալենու ծաղկաբողբոջները, միամյա, երկամյա ճյուղերի միջուկը և գարնանային սառնամանիքներից՝ ծաղիկները:

Ուսումնասիրելով ցածր շերմաստիճանի ազդեցությունը բալենու պտղաբողբոջների վրա, կարելի է նշել, որ նա կապված է պտղաբողբոջների դիֆերենցիացիայի աստիճանի հետ:

Ա. Ն. Վենյամինովը, Պ. Դ. Շիտտը և ուրիշները նշում են, որ որքան խորն է գնում ծաղկի մասերի դիֆերենցիացիան ձմռան սկզբում, այնքան բողբոջները զգալուն են սառնամանիքի նկատմամբ: Մեր ստուգումներից պարզվել է, որ պտղատու բողբոջների մեջ հաճախակի 5 ծաղկաբողբոջներից 4-ը ցրտահարված են լինում, իսկ կենտրոնա-

կան բողբոջը՝ 5-րդը չի մնասվում, պարզվում է, որ ալդ բողբոջը
ավելի պակաս է զարգացած, քան մնացած 4-ը: Ուրեմն, ալս դեպ-
քումն էլ բողբոջների ցրտադիմացկունությունը կապված է բողբոջների
դիֆերենցիացիայի աստիճանի հետ:

Բոլոր ձմեռող բույսերը ձմեռնամտին անցնում են կոփման պրո-
ցես (Մաքսիմով, Թումանով), որով և պայմանավորվում է նրանց
ցրտին դիմանալու աստիճանը: Ձմռան ընթացքում բալենու հաճա-
խակի դիտվող ցրտահարությունները Լենինականի բարձրալանդակում,
տեղի ունեցող ջերմության տատանումների հետևանք են: Նրբ ձմռան
կեսին ջերմությունը բարձրանում է, նրանք կորցնում են իրենց կոփ-
վածությունը:

Ըստ ֆենոլոգիական դիտումների, երբեմն բալենու որոշ սոր-
տերի բողբոջներն ուռչում են մարտի վերջին տասնօրյակից մինչև
ապրիլի առաջին տասնօրյակը, երբ բացարձակ մինիմումը լինում է
—0,1-ից մինչև —8,5° Ց:

Վեգետացիայի ալսպիսի վաղ սկսվելու դեպքում բալենու բողբոջ-
ներն ուժեղ մնասվում են: Նրա պտղաբողբոջները և ծաղիկները ցածր
ջերմաստիճանի նկատմամբ խիստ զգալուն են, որոշ սորտերի մոտ
—1,2° Ց աստիճանին դիտվել է վարսանդների գորշացում:

Լենինականի բարձրալանդակում երբեմն բալենու ծաղկման շրջ-
անում մինիմումը հասնում է —0,1-ից —3,4° Ց-ի, որը և պատճառ
է դառնում ծաղիկների մնասվելուն և բերքատվության իջեցմանը:

Աղյուսակ 1-ում տալիս ենք վեգետացիան սկսվելու և ծաղկման
ֆազայի ընթացքում տեղի ունեցած ջերմաստիճանի բացարձակ մինի-
մումը, ըստ տարիների:

Աղյուսակ № 1

Ջերմության պայմանները Լենինականի սարահարթում բալենու

բողբոջների ուռչելու և ծաղկման շրջաններում ըստ տարիների

1949		1950		1951		1952	
Ապրիլ	Մայիս	Ապրիլ	Մայիս	Ապրիլ	Մայիս	Ապրիլ	Մայիս
—0,7	—0,2	—0,1	—	—0,1	—	—0,3	—1,3
—1,2	—2,7	—3,4	—	—1,7	—	—3,1	—3,1

Այս աղյուսակից երևում է, որ ջերմությունը բողբոջներն ուռչելու
և ծաղիկելու շրջանում ընկնում է 0-ից ցածր, որի հետևանքով ոչ
ցրտադիմացկուն սորտերի ծաղիկները մեծ չափով մնասվում են և
բերքն ընկնում է:

Տարբեր տարիներում ցրտադիմացկունության ուսումնասիրության արդյունքների անալիզը

Բալենու ցրտադիմացկունությունը ուսումնասիրելիս դիտելու առարկա են հանդիսացել պտղաբողբոջները, 1—3 տարեկան շիվերի քնափայտը և միշուկը: Այս նպատակի համար ձմեռվա ընթացքում և գարնան վերջում ստուգվել են ծառի զանազան մասերից վերցված 1—3 տարեկան ճյուղերը:

1948—1949 թթ. դիտողություն է կատարվել բալենու 11 սորտի վրա: Այդ տարվա ձմեռը առանձնահատուկ է եղել իր խիստ սառնամանիքներով. դեկտեմբերին բացարձակ մինիմումը իջել է —32,8°-ի, իսկ հունվար և փետրվար ամիսներին —27°-ի ծ:

Այս պարամաններում բալենու պտղաբողբոջները ֆլասավել են 4,3-ից մինչև 87 տոկոսով: Անգլիական վաղահասը՝ 87 տոկոս, Պոդբելսկին՝ 77,5 տոկոս, Ամորել Երեանից՝ 66,4 տոկոս: Այս թվերը ցույց են տալիս, որ հիշված սորտերի բողբոջների վնասվածությունը բա-
վական բարձր է: Ավելի պակաս չափով են ցրտահարվել Երեանի տեղականը՝ 4,3 տոկոս, Շուբինկա № 124՝ 20 տոկոս, Ամորել Կոզլովսկայան՝ 38,6 տոկոս, Կրասնոպախարսկայան՝ 44 տոկոս. Վլադիմիրսկայա սորտի № 84 կլոնի պտղաբողբոջները ամենեին չեն ցրտահարվել:

Այդ բոլոր սորտերի շիվերի միշուկները գորշացել էին 25—100 տոկոսով, բացառությամբ Վլադիմիրսկայա սորտի № 84 կլոնի:

1949—50 թթ. ձմռան ընթացքում դիտողությունները կատարել ենք երկու ժամկետում՝ փետրվար և մարտ ամիսներին, նույն 11 սորտի վրա: Այդ տարվա ձմեռվա ընթացքում տեղի ունեցած ջերմաստիճանի խիստ տատանումներ, գլխավորապես դեկտեմբեր ամսում:

Այսպես, դեկտեմբերի երկրորդ տասնօրյակում ջերմաստիճանը միանգամից իջավ մինչև —24°-ի, երրորդ տասնօրյակում՝ —1,8—9,8-ի, դեկտեմբերի 30-ին և 31-ին՝ —15,1-ից —20,1-ի, իսկ բացարձակ մինիմումը հողի մակերեսի վրա հասավ մինչև —39,2° ծ-ի:

Այս հանգամանքը խիստ կերպով անդրադարձավ 1950 թվականի բալենու բերքատվության վրա: Վնասն, արտահայտած պտղաբողբոջ-
ների գորշացումով, ըստ սորտերի տարբեր է, 6-ից մինչև 100 տոկոսով: Ուժեղ կերպով ֆլասավել էին՝ Յուբիլեյնայա (100 տոկոս) և Պոդբելսկայա (76 տոկոս) սորտերը: Թույլ էին ֆլասավել Ամորել Կոզլովսկայան՝ մոտ 6 տոկոս, Զախարովսկայան՝ 21 տոկոս, Ամորել Երեանից՝ 33 տո-
կոս: Պտղաբողբոջների գորշացում չի նկատվել Կրասնոպախարսկայա-
լի, Վլադիմիրսկայա սորտի № 84 կլոնի, Կրասն սեբրայի, Երեանի տեղականի և Շուբինկա № 124-ի մոտ:

Շիվերի միշուկի գորշացում դիտվել է ընթացիկ տարում 14 սոր-
տերի մոտ: Միամյա և երկամյա ճյուղերի միշուկի գորշացում հա-
192

տարեկան է Երևանի տեղական, Կրասա սեբրա, Պոլլովկա և Անդո սորտերի մոտ: Միամյա, երկամյա և եռամյա միջուկի գորշացում նկատվել է Շպանկա, Շուբինկա № 124, Ամորել Երևանից սորտերի մոտ:

Երկամյա ճյուղի միջուկի գորշացում նկատվել է Յուբիլեյնայա և Պոդորոդնայա Միչուրինա սորտերի մոտ: Իսկ Պոդբելսկի, Զախարովսկայա սորտերի և Վլադիմիրսկայա սորտի № 84 կլոնի՝ միամյա և եռամյա ճյուղերի միջուկն էր գորշացել:

1950—51 թթ. ձմեռվա ընթացքում ջերմության մինիմումը իջել էր մինչև —25,5° Ց, իսկ հողի մակերեսին՝ —31,1° Ց-ի: Պտղաբողբոջների գորշացում նկատվել է Շպանկա, Յուբիլեյնայա, Ամորել Կոզլովսկայա, Կրասա սեբրա, Ամորել Երևանից, Վլադիմիրսկայա և Երեվանի-տեղական սորտերի մոտ: Ցրտահարություններից պտղաբողբոջների ավելի թույլ վնասվածքներ դիտվել են Շուբինկա № 124 (4 տոկ.), Վլադիմիրսկայա (25 տոկ.), Կլոն Լյուբսկայա (28,5 տոկ.), Պոդբելսկի (40 տոկ.), Մոնմորանսի (40 տոկ.) սորտերի մոտ: Զախարովսկայա, Պոլլովկա, Կրասնոպախարսկայա, Անդո, Պոդորոդնայա Միչուրինա սորտերի մոտ պտղաբողբոջները չեն ցրտահարվել: Միամյա ճյուղերի միջուկի թույլ գորշացում նկատվել է Զախարովսկայայի և Շուբինկայի մոտ, իսկ երկամյա ճյուղի միջուկի գորշացում՝ Մոնմորանսիի մոտ: Վլադիմիրսկայա, Կրասնոպախարսկայա, Ամորել Կոզլովսկայա, Յուբիլեյնայա սորտերի մոտ գորշացել է միամյա, երկամյա և եռամյա ճյուղերի միջուկը, Պոդորոդնայա Միչուրինա, Կրասա սեբրա սորտերի եռամյա ճյուղի միջուկը: Ճյուղերի միջուկի գորշացում չի նկատվել Անդո, Պոլլովկա, Վլադիմիրսկայա № 84 կլոնի և Լյուբսկայա կլոնի մոտ:

Ամփոփելով ցրտադիմացկունություն հաստատված ժամկետի տվյալները՝ ըստ պտղաբողբոջների վնասվածության, բալենու սորտերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի. առաջին խմբի մեջ մտնում են այն սորտերը, որոնց պտղաբողբոջների վնասվածությունը հասնում է մինչև 25 տոկոսի՝ Զախարովսկայա, Շուբինկա № 124, Վլադիմիրսկայա սորտի № 84 կլոնը, Պոլլովկա, կլոն Վլադիմիրսկայա և Լյուբսկա Միչուրինա:

Երկրորդ խմբի սորտերից պտղաբողբոջները ցրտահարվել են մինչև 50 տոկոս՝ Մոնմորանսի, Կրասնոպախարսկայա, կլոն Լյուբսկայա, Պոդորոդնայա Միչուրինա, Լյուբսկայա:

Երրորդ խումբ.—Սրանց մոտ տարբեր տարիներում պտղաբողբոջների վնասվածությունը հասնում է 80—100 տոկոսի՝ Շպանկա, Պոդբելսկի, Վլադիմիրսկայա, Ամորել Կոզլովսկայա, Կրասա սեբրա, Ամորել Երևանի, Յուբիլեյնայա, Անդլիական վաղահասը:

Պտղաբողբոջների ցրտահարություն չի նկատվել Անդո, Ռոգնե-

դա, Նադեժդա Կրուպսկայա սորտերի մոտ: Միամյա, երկամյա, եռամյա բնափայտի միջուկի գորշացում նկատվել է Շպանկա, Պողբելսկի, Ջախարովսկայա, Շուբինկա № 124, Վլադիմիրսկայա, Կրասնոպախարսկայա, Ամորել Կոզլովսկայա, Կրասա սեբրա, Ամորել Երևանից, Յուբիլեյնայա, Երևանի. տեղական, Լյուբսկայա սորտերի մոտ: Երկամյա և եռամյա ճյուղերի միջուկի գորշացում չի նկատվել Պլոդոբոճնայա Միչուրինա, Պոլյովկա, Անդո և Ռոգոնեդա սորտերի մոտ. երկամյա ճյուղի միջուկը վնասվել է Մոնոբրանսի սորտի մոտ:

Պտղաբողբոջների ուժեղ վնասվածությունն առանձին տարիներում անդրադարձել է տարվա բերքատվության վրա. այսպես օրինակ՝ 1949—50 թթ. պտղաբողբոջների վնասվածությունը հասնում էր 66—100 տոկոսի: Այդ ձևով վնասված պտղաբողբոջներով բաղնինները այդ տարին չպտղաբերեցին:

Հայաստանի բարձրավանդակի բալենու սորտերի լավագույն փոշոտիչները

Բարձր բերքատվությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է առանձնացնել բալենու սորտերի լավագույն փոշոտիչները:

Դիտողություններից և փորձի տվյալներից պարզվում է, որ տարբեր տարիներում պտղակալման տոկոսը ենթակա է փոփոխության: Դա անմիջականորեն կախված է ծաղկման և պտղակալման ժամանակ եղած ջերմության և օդի խոնավության պայմաններից: Մյուս կողմից այդ տվյալները վկայում են այն մասին, որ ոչ բոլոր սորտերի մոտ նորմալ ձևով են ընթանում բեղմնավորման պրոցեսները: Այն սորտերը, որոնց բեղմնավորման նորմալ ընթացքը եղանակի պատճառով լեռնային գոտու պայմաններում խախտվում է սխտեմատիկ ձևով, ասորտիմենտի մեջ չպետք է թողնել: Լեռնականի հարթավայրում տարվող ուսումնասիրությունների հիման վրա կազմված է փոխադարձ փոշոտվող սորտերի խմբերը: Այսպիսի խմբավորումը հեշտացնում է սորտերի գործնական ընտրությունը բալենու տնկարկ հիմնադրելիս:

Բալենու խաչածե փոշոտման ուսումնասիրության արդյունքները վկայում են այն մասին, որ նրա սորտերի մեծ մասը փոխադարձ փոշոտվող է: Ինքնափոշոտվողների մոտ խաչածե փոշոտման ժամանակ օգտակար պտղակալման տոկոսը բարձրանում է: Փոշու խառնուրդով օգտակար պտղակալման տոկոսը բոլոր խառնուրդ կազմող կոմբինացիաներում բարձր է:

Ներքևում բերվում է բալենու փոխադարձ փոշոտվող սորտերի խմբավորումը և լավագույն փոշոտիչների ցուցակը:

Բալենու սորոտերի լավագույն փոշոտիչները

Փոշոտվող սորտեր	Փ ո շ ո տ Ի չ ն Ե Ր
Շուբինկա № 124	Լյուբսկայայի կլոնը, Կրասնոսլաբսկայա, Վլադիմիրսկայա, Վլադիմիրսկայա սորտի կլոնը, Զախարովսկայա, Պոդբելսկի, Շուբինկա, Մոնոթրանսի, Վլադիմիրսկայա սորտի № 84 կլոնը, Շպանկա:
Պոլյովկա	Լյուբսկայայի կլոնը, Կրասնոսլաբսկայա, Ամորել Կոզլովսկայա, Վլադիմիրսկայա, Շուբինկա, Երեմյանի, տեղական:
Վլադիմիրսկայա սորտի № 84 կլոնը	Կրասնոսլաբսկայա, Ամորել Կոզլովսկայա, Պոլյովկա:
Վլադիմիրսկայա	Պրոդոբոնայա Միշուբինա, Պոդբելսկի, Մոնոթրանսի, Շուբինկա № 124, Երեմյանի, տեղական, Լյուբսկայայի կլոնը, Վլադիմիրսկայա, Պոլյովկա:
Վլադիմիրսկայա սորտի կլոնը	Լյուբսկայայի կլոնը, Վլադիմիրսկայա, Շուբինկա № 124, Երեմյանի, տեղական:
Կրասնոսլաբսկայա	Պոդբելսկի:
Պոդբելսկի	Վլադիմիրսկայա:
Երեմյանի տեղական	Պոլյովկա, Զախարովսկայա:
Ամորել Կոզլովսկայա	Վլադիմիրսկայա, Զախարովսկայա, Պոդբելսկի, Շպանկա, Շուբինկա № 124, Կրասնոսլաբսկայա:
Կլոն Լյուբսկայա	Կրասնոսլաբսկայա, Վլադիմիրսկայա, Պոլյովկա, Զախարովսկայա, Շպանկա, Մոնոթրանսի, Վլադիմիրսկայա սորտի № 84 կլոնը, Շուբինկա, Երեմյանի, տեղական:
Շ ա կ ա ն կ ա	Լյուբսկայայի կլոնը, Կրասնոսլաբսկայա, Վլադիմիրսկայա, Կլոն Վլադիմիրսկայա, Պոլյովկա, Մոնոթրանսի, Շուբինկա, Վլադիմիրսկայա սորտի № 84 կլոնը:

Ա զ յ ու ս ա կ 3

Փոխադարձ փոշոտվող բալենու սորոտերը

Շպանկա— Լյուբսկայա— Շուբինկա
 Շուբինկա— Ամորել Կոզլովսկայա
 Վլադիմիրսկայա— Շուբինկա— Վլադիմիրսկայա սորտի կլոն,
 Պոլյովկա— Վլադիմիրսկայա
 Շուբինկա— Պոլյովկա
 Վլադիմիրսկայա— Պոդբելսկի
 Երեմյանի, տեղական— Պոլյովկա

Բալենու սորտերը, ըստ պտուղների հասունացման ժամկետի, բաժանվում են երեք խմբի. վաղ հասունացող սորտեր՝ հուլիսի առաջին և երկրորդ տասնօրյակում՝ Ամորել Երևանից, Անդո, Շպանկա, Պոդբելսկի, Կրասա սևերա, Անգլիական վաղահաս, Ամորել Կոզլովսկայա, Պոլլովկա, Ամորել.

միջին ժամկետի՝ հուլիսի 3-րդ տասնօրյակում՝ Երևանի տեղական, Յուբիլեյնայա, Վլադիմիրսկայա, Շուբինկա № 124, Լյուբսկայալի կլոնը, Զախարովսկայա, Մոմոբանսի.

ուշ հասունացողներ՝ օգոստոսի առաջին տասնօրյակում՝ Պլոդորոդնայա Միչուրինա, Կրասնոպախարսկայա, Վլադիմիրսկայալի կլոն № 84:

Պտուղների մեծությամբ աչքի են ընկնում՝ Կրասնոպախարսկայա, Շպանկա, Լյուբսկայալի կլոն (նկ. 1), Պլոդորոդնայա Միչուրինա, Յու-



Նկ. 1. Լյուբսկայալի կլոնը

բիլեյնայա, Զախարովսկայա սորտերը, որոնց մոտ պտուղների քաշը հասնում է 4—5 գրամի: Մնացած սորտերն ունեն միջին մեծությամբ պտուղներ՝ 2—4 գրամ:

Առաջնակարգ որակի են՝ Պողբեխկալա, ապա Կրասնոպոլսկայա-
կալա (նկ. 2), Շպանկա, Կրասն սեերա, Զախարովսկալա, Ամորել



Նկ. 2. Կրասնոպոլսկայա

Երևանից, Վլադիմիրսկայա, Շուրինկա № 124-ի պտուղները: Մնացած
բոլոր սորտերի պտուղները հրորդ կարգի են:

Բերքատվություն հաշվառումը տրվել է բալային սխեմայով և
փաստացի հավաքած պտուղների քաշով:

Բաղմամյա տարիների տվյալների համաձայն, 10 տարեկան ծա-
ռերի բերքը հասնում է հետևյալի (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

	Սորտերի անունները	Բերքը կիլո- գրամներով մեկ ծառից
1	Ա ն դ ո	3,0
2	Ամորել Երևանից	3,5
3	Պսլյովկա	8,0
4	Շպանկա	12,0
5	Կրասնոպոլսկայա	12,0
6	Պլոդոբոցնայա Միչուրինա	12,0
7	Պողբեխկի	12,0
8	Ամորել Կոլյովսկայա	16,0
9	Վլադիմիրսկայա	17,6
10	Մոնմորանսի	22,7
11	Շուրինկա	24,0

Պտուղների քիմիական կազմը. — Քիմիական անալիզի տվյալներով ընդհանուր շաքարների պարունակությամբ առաջնակարգ տեղ են գրավում Պողբելսկի (11,2 տոկ.), Շուբինկա (10,6 տոկ.), Անդո, Մոնմորանսի, որոնց մոտ շաքարը կազմում է 9,2—9,9 տոկոս:

Թթուների պարունակությամբ առաջնակարգ տեղ են գրավում Լյուբսկայան (1,68 տոկ.), Ամորել Կոզլովսկայան (1,6 տոկ.), Շուբինկան (1,9 տոկ.): Բոլորից քիչ թթուներ են պարունակում Շպանկան (0,45 տոկ.), Անդոն 0,67 և Մոնմորանսին (0,67 տոկ.):

Վիտամին C բոլորից շատ պարունակում է Անդոն (24,0 միլիգրամ տոկոս): Մյուս սորտերի մոտ վիտամին C-ի քանակը տատանվում է 11,7—20,59 միլիգր. տոկոսի սահմաններում:

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ 5

Բալի (պտուղների) քիմիական բաղադրությունն ըստ այգեգինեգործության և պտղաբուծության ինստիտուտի քիմիական լաբորատորիայի տվյալների

Սորտերի անունները	Անալիզի ժամանակ	Չար շուկեր	Ընդհանուր ջրածուր	Ինվիզի. ջրածուր	Սախարոզ	Գլյուկոզ	Ֆրուկտոզ	Թթուներ	Վիտամին C միլիգր. տոկոս
Պողբելսկի	27/7—50	21,71	11,2	9,5	1,7	4,60	4,90	1,59	20,59
Շուբինկա № 134	»	20,21	10,6	7,6	3,0	3,26	4,39	4,90	14,54
Շպանկա	»	15,59	10,5	8,5	1,8	4,10	4,60	0,45	23,52
Ամորել-Կոզլովսկայա	»	15,60	9,9	9,5	0,4	3,98	5,52	1,68	18,06
Վադիմիրսկայա	»	16,59	9,7	9,3	0,4	4,20	5,10	0,70	18,91
Մոնմորանսի	20/7—50	13,79	9,4	9,3	0,1	3,90	5,40	0,57	11,07
Ա ն դ ո	12/7—50	12,84	9,2	6,7	2,5	3,60	3,10	0,67	24,0

Լենինականի բարձրավանդակում բազմացման համար առաջադրվող սորտերի նկարագրությունը

Շպանկա. — Ծառը՝ միջին մեծությամբ, մինչև 4 մետր բարձրությամբ:

Պսակը՝ մինչև 6 մետր լայնությամբ, տարածված, ուղիղ աճող ճյուղերով, շիվերը՝ հաստ. տերևները՝ մեծ, հաստ, մուգ-կանաչ, հակառակ ձվաձև, սրածայր դագաթով, սղոցավոր եզրերով:

Պտուղները՝ կլոր, առանցքի ուղղությամբ սեղմված, մինչև 5 գրամ կշռով, պտղակոթը՝ կարճ, հաստ, պտղամիսը՝ բաց կարմիր գունի, քաղցրաթթվային հաճելի համով:

Հասունացումը՝ հուլիսի առաջին կեսին: Բերքը 10 տարեկան ծառերի՝ հասնում է 12 կիլոգրամի: Պտղաբողբոջները՝ թույլ ցրտադիմացկուն, բնափայտը ցածր շերմաստիճանին դիմացկուն:

Ամռնել Կոզլովսկայա.— Ծառը՝ կիսաթուփ, մինչև 3 մետր բարձրությամբ, կլոր լախն պսակով: Շիվերը՝ միջակ հաստությամբ, տերևները՝ մանր, բաց կանաչ գույնի, հակառակ ձվաձև, եզրերից ներս ծոված դեպի կենտրոնական ջիղը, կրկնակի սղոցանգր:

Պտուղները՝ կլոր 1,5—1,6 սմ տրամագծով, 4 գրամ կշռով. պլուդակոթը՝ մինչև 3,5 սմ երկարությամբ, հասունացման ժամանակ հեշտությամբ անջատվող. մաշկը՝ պինդ, բաց կարմիր գույնի, միսը՝ դեղնավուն, հյութը՝ թույլ վարդագույն, համը՝ հաճելի, քաղցր թթվաշ:

Տաս տարեկան ծառերից ստացվում է մինչև 16 կիլոգրամ բերք, հասունանում է հուլիսի երկրորդ կեսից: Պտղաբողբոջները և բնափայտը որոշ տարիներում վնասվում են ցրտից:

Շուրիճկա № 124.— Ծառը՝ մինչև 4—4,5 մետր բարձրությամբ, կլոր պսակով, ներքև իջնող ճյուղերով: Շիվերը՝ միջակ մեծությամբ, կորացած, տերևները՝ միջակ մեծությամբ, հակառակ ձվաձև, մուգ կանաչ, բուրբ սղոցանգր: Ծաղկում է միաժամանակ մյուս սորտերի հետ: Պտուղները՝ տափակ, կլորավուն, 2—3 գրամ քաշով: Պտղակոթը՝ երկար, բարակ: Մաշկը՝ մուգ կարմիր գույնի, բարակ, փայլուն: Պտղամիսը՝ ներկված, հյութալի, թթու համով, գերհասունացման շրջանում քաղցրաթթվաշ: Կորիզը՝ միջակ մեծությամբ, կլոր: Հասունանում է հուլիսի վերջին տասնօրյակում: 10—12 տարեկան ծառերից ստացվում է մինչև 24 կիլոգրամ բերք: Լեռնականների բարձրավանդակում բնափայտի և պտղաբողբոջների ցրտադիմացկունությունը բարձր է: Ծաղկման շրջանում ցածր շերմաստիճանից ($-0,7—-1,2$) վարսանդներն ուժեղ վնասվում են, որից խիստ կերպով բերքը ընկնում է:

Կրասնոպալսարսկայա.— Ծառերը՝ մինչև 4,5 մետր բարձրությամբ, նեղ բրդաձև պսակով: Շիվերը՝ հաստ, միջակ մեծությամբ, տերևները՝ միջակ, երկարավուն էլիպսաձև, մանր սղոցանգր, թիթեղը՝ կոշտ, դեպի կենտրոնական ջիղը ծոված եզրերով: Պտուղները՝ մեծ, մինչև 5—6 գրամ կշռով, կլոր, պտղակոթը՝ երկար, հաստ, մաշկը՝ հաստ, մուգ կարմիր գույնով: Միսը՝ մուգ ներկված, պինդ, քաղցրաթթվաշ համով:

Բերքի հասունացումը՝ օգոստոսի երկրորդ տասնօրյակում: 10—12 տարեկան ծառերի բերքը հասնում է մինչև 12 կիլոգրամի:

Ծաղկաբողբոջները՝ բավականին ցրտադիմացկուն, ծառերի աճեցողությունը՝ փարթամ. խեղճահասունություն չի նկատվում:

Վլադիմիրսկայա.— Ծառը՝ մինչև 3 մետր բարձրությամբ, պսակը՝ կլոր, իջնող ճյուղերով: Ծյուղերը՝ միջակ հաստությամբ, կիսակլոր:

Տերեւները՝ միջակ, հակառակ ձվածե, մուգ կանաչ թիթեղով, սղոցա-
եզր, թիթեղը ծաված դեպի ներս՝ գլխավոր շղի ուղղութեամբ:

Ծաղկում է մյուս սորտերի հետ միասին: Պտուղները՝ միջակ մե-
ծութեամբ, մինչև 3 գրամ քաշով, երկար պտղակոթով, պտղի գույնը՝
մուգ կարմիր, գրեթե սև, մաշկը՝ փալլուն, պինդ: Պտղամիսը՝ մուգ
կարմիր, հլութալի և պինդ, քաղցրաթթվաշ համով: Պտղահյութը՝
նեղկլիող, կորիզը՝ կլոր և ազատ: Հասունացումը՝ հուլիսի վերջին-օգոս-
տոսին-ձգձգվող: 10 տարեկան ծառերի բերքը՝ մինչև 8 կիլոգրամ:
Բնափայտի ցրտադիմացկունութունը բարձր է: Յրտահարութեան
ֆլասավածքները շատ թույլ ձևով են արտահայտված: Պտղաբողբոջները
30-ից ցածր ջերմաստիճանում ֆլասվում են:

Անդր.— Ծառը՝ մեծ, երկու մետր բարձրութեամբ: Շիվերը՝ կա-
նաչ-դեղնավուն, տերեւները՝ մանր ձվածե, խորդ ու բորդ մակերեսով,
երկու երեսն էլ մազմզուկներով ծածկված թիթեղով: Պտուղները՝ կլոր,
կարճ պտղակոթով, բաց կարմիր գույնով, մաշկը՝ պինդ, ծածկված
թույլ նշմարելի մազմզուկներով: Պտղամիսը՝ բաց վարդագույն, միջակ
պնդութեամբ, հլութը՝ գրեթե անգույն, համը՝ քաղցրաթթվաշ, թարմաց-
նող: Կորիզը՝ փոքր, ձվածե, հեշտութեամբ անշատվող: Բազմաճում է
կորիզներով: Պտղաբերութիւնը՝ վաղ, երկու տարեկան բույսերը սկը-
սում են ծաղկել: Ութ տարեկան թփերից ստացվում է մինչև 3 կիլո-
գրամ բերք:

Յրտադիմացկունութունը՝ բարձր է: Լեռնականի բարձրավան-
դակում — 39,2 ջերմաստիճանում պտղաբողբոջների և բնափայտի
ֆլասվածութիւնը չի դիտվել: Ծաղիկների ցրտադիմացկունութիւնը
նույնպես բարձր է: Ծաղկման շրջանում — 3^o չի խանգարել նորմալ
պտղաբերմանը: Առաջադրվում է բազմացնել հատկապես տնամերձ
հողամասերում:

Պլոդոբողբայա Միչուրիցա.— Ծառը՝ մինչև երկու մետր բարձ-
րութեամբ, կլոր, փուլած պսակով, շիվերը՝ բարակ, տերեւները՝ մեծ,
սղոցաեզր: Բոլոր սորտերից ամենաուշ ծաղկող, ինքնափռոցովող:
Պտղաբերում է միայն երկարավուն ճյուղերից: Պտուղները՝ մեծ մինչև
4 գրամ կշռով, 2—3 հատ միասին, կլոր, կարմիր գույնով, մաշկը՝
հաստ, փալլուն, պտղամիսը՝ կարմիր, հլութալի. պտղահյութը՝ նեղկ-
ված, համը՝ թթվաշ, պտղակոթը՝ հաստ, կորիզը՝ էլիպսաձև, մեծ:
Հասունացումը՝ Լեռնականի բարձրավանդակում օգոստոս ամսի երկ-
րորդ կեսին: Բերքատվութիւնը՝ բարձր, 10 տարեկան ծառերից
ստացվում է մինչև 12 կիլոգրամ պտուղ: Պտղաբողբոջների և բնա-
փայտի ցրտադիմացկունութիւնը բարձր է:

Պլյուվկա.— Ծառը՝ գաճաճ, մինչև մեկ ու կես մետր բարձրու-
թեամբ, պսակը՝ խիտ, շիվերը՝ բարակ, տերեւները՝ մանր, հակառակ

ծնված, մանր սղոցանդր: Մաղկում է մյուս սորտերի համեմատութեամբ ուշ:

Պտուղները՝ միջին մեծութեամբ, մինչև 3 դրամ քաշով, կլոր, պտղակիթը՝ միջակ երկարութեամբ, բարակ: Մաշկը՝ բաց կարմիր գունով, փալլուն: Պտղամիտը՝ կարմիր, թուլ ներկված հլիթով, թթվաշ համով, կորիզը՝ մանր երկարավուն: Հասունացումը՝ հուլիսի վերջին տասնօրյակում: Բերքատուլութունը՝ 10 տարեկան ծառերից՝ մինչև 8 կիլոգրամ:

Բնափայտի և պտղաբողբոջների ցրտադիմացկունութիւնը բարձր է: Շնորհիվ փոքր պսակի, ծառերը կարելի է տնկել 2×3 մ հեռավորութեամբ:



Բալկնու սորտերի ագրորիտլոգիական առանձնահատկութիւնների ուսումնասիրութեան և Հայաստանի բարձրավանդակի հողակլիմայական ու տնտեսական պայմանների հիման վրա կազմված է բալկնու ստանդարտ սորտիմենտը:

Բալկնու սորտերի տեղադրումը Հայկական բարձրավանդակում

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ Ծ

Բարձրավանդակի շրջանները ըստ ենթագոտիների

№ ը/կ	Սորտերի անունները և կարգը	Աղաբան, Ախտա, Կա- մո, Բասար- դեշար, Դու- կասյան	Ախտըյան Արթիկ, Մարտունի, Կալինինո 1500 մ բարձրու- թեամբ	Կիրովահան, Սպիտակ, Կարմիր 1500 մ բարձրու- թեամբ	Ալադյազ Ադին, Թալին 1500 մ բարձրութ.
1	Ամուրեյ Երևանից	II	II	II	II
2	Ամուրեյ Կողովսկայա	III	III	III	III
3	Շպանկա	—	I	I	—
4	Վլադիմիրսկայա Կլոն № 84	I	I	I	I
5	Շուբինկա № 124	I	I	I	I
6	Վլադիմիրսկայա	II	II	II	II
7	Կրասնոպոլսարսկայա	—	I	I	I
8	Պլոդոբողնայա Մի- չուբինա	I	I	I	I
9	Պոլյովկա	II	II	II	II
10	Ա Ն զ ո	II	II	II	II

1. Հոտմեական թվերը ցույց են տալիս սորտի նշանակութիւնը շրջանի համար.

Նախնական սորտառումնասիրության տվյալների համաձայն Լե-
նինականի սարահարթում փորձարկվող բալենու սորտերից իրենց բիո-
լոգիական-տնտեսական հատկանիշներով արժեքավոր են Հայաստանի
լեռնային շրջաններում բազմացնելու համար վաղ հասունացող սոր-
տերից՝ Անդո¹, Ամորել Երեանից, Շպանկա:

Միջին ժամկետի՝ Վլադիմիրսկայա, Շուբինկա № 124, Վլադի-
միրսկայա կլոն № 84, Ամորել Կոզլովսկայա, Կրասնոպախարսկայա:

Ուշ հասունացող՝ Պոդորոդնայա Միչուրինա, Պոլյովկա¹:

¹ Դրանք շատ ցածր թփեր են, ուստի պետք է տնկել միջնաբերում. նրանք
լավ են տնամերձ հողամասերում տնկելու համար:

П. Г. КАРАНЯН и Е. П. СЕХПОСЯН

ИЗУЧЕНИЕ СОРТОВ ВИШЕН НА ЛЕНИНАКАНСКОМ ПЛАТО

В деле внедрения культуры косточковых в горную зону Армянской ССР важное значение имеет изучение их сортов.

Из косточковых культура вишни выгодно отличается от остальных ранним плодоношением, содержанием в ягодах легко усвояемых сахаров, кислот и зольных элементов, необходимых для организма человека.

Для нормального произрастания и продуктивности эта культура требует легкую суглинистую почву, которая достаточно влагоемка и имеет хорошую аэрацию. Вишня хорошо растет и на тех почвах, где карбонатность выше, чем она приемлема для семечковых.

Как и многие плодовые, вишня достаточно легко выносит температурные понижения. Однако почки некоторых сортов при резких температурных колебаниях сильно повреждаются, вследствие чего погибает весь урожай.

Большие повреждения в горной зоне причиняют поздневесенние похолодания, которые совпадают с началом вегетации вишни. Как показывают данные сортоизучения, лучшая урожайность получается от поздноцветущих сортов, цветение которых проходит, минуя время поздних весенних заморозков (Плодородная Мичурина, Монморанси), и от тех, цветки которых выносят низкую температуру без больших повреждений (Аньдо).

Изучения и наблюдения показали, что наименьшие повреждения плодовых почек в период длительного покоя имеют сорта: Любка Мичурина, Захаровская, Шубинка, Владимир-

ская, Полевка. Значительно больше они у Любской, Краснопахарьской, Шпанки Подбельского, Монморанси, Английской скороспелки.

В условиях высокогорья раньше всех созревание ягод (15—18 июля) наступает у сортов: Аньдо, Шпанка, Краса Севера и др. Значительно позже (25—28 июля) созревают сорта: Шубинка, Владимирская, Монморанси, Захаровская. Позже всех вызревают (I декада августа) Плодородная Мичурина, Краснопахарьская, Полевка.

Урожайность десятилетних деревьев Шубинки, Шпанки, Владимирской, Амореи Козловской, Краснопахарьской, Плодородной Мичурина, Полевки и др. в благоприятный год составляет от 8 до 24 кг с дерева.

Содержание сахара в плодах колеблется от 9,2 до 11,2%, кислотность — от 4,5 до 4,9%.

Многолетние агробиологические изучения и наблюдения показали, что лучшими сортами вишен для произрастания в условиях горной зоны республики нужно признать по раннему сроку созревания: Аньдо, Шпанку, Аморею из Еревана; по среднему сроку — Владимирскую, Аморею Козловскую, Шубинку; и позднему сроку: Плодородную Мичурина, Полевку.

ЛИТЕРАТУРА

1. У. П. Хендрик *Помология*, 1937. Место произрастания и история культуры вишни, опытная ст., стр. 126—133.
2. Московская плодово-ягодная станция. Сорта плодовых и ягодных культур. Стр. 117—140.
3. Белохонов И. В., Курьиндин И. М., Карпов Г. К., Урсуленко П. К., Шуб Д. Б., Веняминов А. Н. *Плодоводство*, 1939, стр. 24—28.
4. И. В. Мичурин, том II, 1948 Вишни, стр. 148—211.
5. П. Ф. Дуброва. Подбор пород и сортов плодово-ягодных культур с 1950 года.
6. Б. Анзин. „Вишня и слива“, 1949.
7. И. В. Мичурин т. IV, 1948 г. Сорта вишен, легче всех размножающихся отпрысками, стр. 447.
8. П. Г. Караян, Е. П. Сехпоян, 1953. Подбор опылителей для вишен в условиях Ленинанканского плато.
9. А. Н. Веняминов, 1954. Селекция вишни, сливы и абрикосов.